ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-23/01»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար նախագծային փաթեթների մշակման» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 20:50-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2022 թվականի դեկտեմբերի 14-ին ժամը 11:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Հարգելի գործընկերներ. Խնդրում ենք պարզաբանում տալ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Որքա՞ն է այս մրցույթի գնահատված առավելագույն գինը,
2. Խնդրում ենք նշել խախտված հողերի մոտավոր տարածքները, որոնք պետք է հետազոտվեն: Սա անհրաժեշտ է առաջարկի գնի ձևավորման համար:
3. Արդյո՞ք մրցութային ընթացակարգը նախատեսում է պատվիրատուի կողմից մրցույթի մասնակիցների առաջարկները բացելուց հետո գինը նվազեցնելու խնդրանքը:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-23/01» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից. հրավերում և տեխնիկական բնութագրում հստակ նշված է հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am

«ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով